ԱՐԱՐԱՏ

ԹԻՒ Ե. — ՇԱԲԱԹ ԻԲ. 1890 ՏԱՐԻ ԻԳ. ՄԱՅԻՍ 31

ՕՐՀՆՈՒԹԻՒՆ

ՍՐԲԱԼՈՅՍ ՄԻՒՌՕՆԻ

Ներկայ 1890 տարւոյ Սեպտեմ. 30ին ի տօնի Վարագայ Ս. խաչի՝ ըստ յաջողելոյ Տեառն Աստուծոյ՝ Վեհափառ և Սրբազնագոյն Կաթուղիկոսն ամենայն Հայոց Տ. ՄԱՏԹԷՈՍ մտադրեալ է Ս. Միւռօն օրհնել։

Ս. Միւռօնի օրհնութիւնը Հայաստանեայցս Եկեղեցւոյ նուիրական արարողութիւններից առաջինն լինելով, Վեհ. Հայրապետը բարեհաճեցաւ կանխաւ ի լուր ամենեցուն հրատարակել, որպէս զի ցանկացող բարեպաշտ հոգևորականք և աշխարհականք ըստ նախնի սովորութեան ի ժամանակին ժամանեն ի Մայր Էթոռս և վայելեն Ս. Միւռօնի օրհնութեան հնորհը։